

**ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ՀԱՅՈՑ ԳՐԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ  
ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ  
ՔՆՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

**ԱՇՈՏ ՆԵՐՍԻՍՅԱՆ, ԱՐՇԱԿ ՆԵՐՍԻՍՅԱՆ**

**Բանալի բառեր** – Մերսոպ Մաշտոց, Հայոց գրեր, Այբուբեն, Վռամշապուհ արքա, դանիելյան գրեր, Սահակ Պարթև:

**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

Հայոց գրերի հարցը բազմիցս է ուսումնասիրության առարկա դարձել տարբեր հեղինակների կողմից, բայց դեռևս շատ խրթին էջեր կան դրանց ստեղծման պատմության հետջ կապված: Դրանք գրոյից են ստեղծվել, ինչ որ եղած գերեի հիմքով, թե իրոք գոյություն են ունեցել Մաշտոցից առաջ: Հոդվածը քննական նոր վերլուծություն է, որում փորձ է արվում գտնել այս հարցերի սպառիչ պատասխանները:

**ՀԻՄՆԱՀԱՐՑԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ**

Հայոց գրերի ստեղծման խնդիրն առհասարակ պետք է պնդել, որ դրվել է պետական մակարդակով, քանի որ դրանց բացակայությունը տանում էր հայ ժողովրդի վերացման և այն իրավիճակում, երբ երերուն էր դարձել հայոց պետության գոյությունը: Եվ ահա, այն ապարդյուն ջանքերից հետո, որն ի գործ դրեց Մերսոպ Մաշտոցը դանիելյան գրերով հայոց հնչուններն արտահայտելու ուղղությամբ, նա բռնեց մեկ այլ ճանապարհ, երկրից մեկնելու ճանապարհը, որի շարժառիթն այնքան էլ մեր պատմագրության կողմից համոզիչ չի պատճառաբանվում: Համենայն դեպս, հստակ և վերջնականապես չեն հիմնավորվում երկու տեսակետների ճշտությունն էլ, որոնք են՝ Մաշտոցը մեկնում է Ամիդ, Մամուսատ, Եդեսիա՝ հայոց գրերի ստեղծման համար տեղում ուսումնասիրություններ կատարելու, թե՞ հայոց կորած գրերը գտնելու: Որ հստակ չի նպատակը և

ավելի շատ այն եզրակացությանն է հանգեցնում, որ գնացել է կորած այբուբենի հետևից, երևում է հենց Կորյունի աշխատությունից, ուր մասնավորապես կարդում ենք. «Իսկ երբ հասկացան, որ այդ նշանագրերը (Դանիելյան) բավական չեն հայերեն լեզվի սիդոբաները-կապերն ամբողջությամբ արտահայտելու համար, - մանավանդ որ նշանագրերն էլ իսկապես ուրիշ դպրություններից քաղված և հարություն առած հանդիպեցին, ապա դարձյալ երկրորդ անգամնույն հոգսի մեջ ընկան և մի քանի ժամանակ մի ելք էին փնտրում դրան:

Դրա համար երանելի Մաշթոցը՝ արքայի հրամանով և սուրբ Սահակի համաձայնությամբ՝ մի խումբ մանուկներ առավ հետը և, սուրբ համբույրով միմյանց հրաժեշտ տալուց հետո, գնաց հայոց արքա Վռամշապուհի հինգերորդ տարում և գնաց, հասավ Արամի (Ասորիքի – Ա. Ն,) երկու քաղաքները, որոնց առաջինը Եդեսիա է կոչվում և երկրորդի անունն է Ամիդ: Ներկայացավ սուրբ Եպիսկոպոսներին, որոնց առաջինի անունը Բաբիլաս էր և երկրորդինը՝ Ակակիոս: [Նրանք] կղերականների և քաղքենիների հետ միասին հանդիպեցին և շատ մեծարանքներ ցույց տալով հասնողներին՝ ընդունեցին հոգ տանելով [նրանց համար] քրիստոնյաների կարգի համաձայն: Իսկ աշակերտասեր ուսուցիչն իր հետ տարածներին [խմբի] բաժանելով՝ ոմանց ասորական դպրության կարգեց [Եդեսիա քաղաքում] և ոմանց հունական դպրության [կարգելով]՝ այնտեղից ուղարկեց Սամուսատական քաղաքը»:<sup>1</sup>

Այս ընդարձակ մեջբերումը մենք պատահաբար չենք անում: Այն ոչինչ չի ասում, թե, ի վերջո, Մեսրոպ Մաշտոցն ինչ էր իր հետ տարած «մանուկներին հետ ուսումնասիրում այս քաղաքներում՝ նրանց գրերի ստեղծման փորձը»: Բայց արդյո՞ք նրանք գրեր ունեին: Ամեննին ոչ: Ուրեմն նա գնացել է հայոց գրերի հետևից, կամ ավելի ճշգրիտը, երբ վերջինից Հաբել Խաղունու բերած գրերը թերի են լինում, նա մեկնում է դրանք լրացնելու: Ահա այդ մասին պատմահոր վկայությունը. «Սրանից հետո ինքը Մեսրոպը աշակերտներով իջնում է Միջագետք նույն Դանիելի մոտ, և նախկինից ավել բան չգտնելով՝ անցնում է Եդեսիա, Պղատոն անունով

<sup>1</sup> Կորյուն, Վարք Մաշտոցի, էջ 29-30:

մի հեթանոս ճարտասանի մոտ, որ դիվանի պետն էր»:<sup>1</sup> Եթե դիվանի պետի մոտ է գնացել, որը դիվանները գննելուց հետո, ըստ Խորենացու ոչին չի գտել, նշանակում է նա փնտրում է մեր կորած գրերը:

Հակառակ դեպքում նոր գրեր ստեղծելու համար նրա համար արքան և եպիսկոպոսապետը ամեն պայման ստեղծել էին Վաղարշապատում:

Կորյունն այնուհետև որևէ էական բան չի գրում, բացի նրանից, որ Մաշտոցն այնուհետև իր աշակերտների հետ անընդհատ աղոթելուց և տքնելուց հետո ստեղծեց «հայերեն լեզվի նշանագրեր»:<sup>2</sup>

Մի բան ակնհայտ է, որ Եղեսիայից նա բերել է հայոց այբուբենը, բայց ինքն է ստեղծել, թե ավարտական տեսքի է բերել դանիելյան նշանագրերը կամ գտել է Քրիստոնեության ընդունման ժամանակ կորածը, որևէ մեկը ցայսօր չի կարողացել այս առումներով լիարժեք և հիմնավորված տեսակետներ մատուցել: Մի փոքր առաջ անցնելով, ցանկանում ենք շեշտել, որ անկախ այն հանգամանքից, թե Մաշտոցն ինքն է նորը ստեղծել, թե հինն է գտել, ամենևին չի խունացնում նրա փառքն ու հանճարը, որովհետև բացառիկ հանճարով օժտված անձը միայն կարող է թեկուզ եղած տառերը համապատասխանացնել հնչյուններին: Բայց պատմագիտական արդար քննությունը, ճշմարտության լիարժեք վերհանումը, թեկուզ այն մասին, որ լիովին ապացուցված չէ, ինքն է հորինել, թե գտել է, չափազանց կարևորում ենք, առանց հավակնություն ունենալու մեր տեսակետը վերջնականապես ճիշտ համարելու: Բայց այլ փաստեր հակառակն են վկայում: Այսպես իրանահայ հայտնի հետազոտող Հովիկ Ներսիսյանը, իր ուսումնասիրություններից մեկում գրում է, որ «Գրիգորյան կարգ ու կանոն չընդունողները հեռանում էին Հայաստանից և «Այդ խավին էին պատկանում մի խումբ նախկին իմաստասեր քրմեր, դրանցից մեկը, որը հետագայում Յուրաքթոս, ավելի ճիշտ, Աթաքթոս անվամբ կոչվեց, որ նշանակում է անօրեն, հեռացավ հայրենիքից, քանզի չէր ընդունում Գրիգորի կարգ ու կանոնը, իր հետ տանելով նախամեսրոպյան հայ գիրը, փրկելով այն Գրիգորի ոչնչացումից»:<sup>3</sup>

<sup>1</sup> **Մովսես Խորենացի**, Հայոց պատմություն, էջ 293:

<sup>2</sup> **Կորյուն**, նշվ. աշխ., էջ 30:

<sup>3</sup> **Հովիկ Ներսիսյան**, Հայագիտական ուսումնասիրություններ, էջ 309-310:

Անկախ այն հանգամանքից, թե Հ. Ներսիսյանն ինչպիսի վերաբերմունք ունի Քրիստոնեության և Գրիգոր Լուսավորիչի նկատմամբ, մենք այստեղ ցանակնում ենք կարևորել փաստը, որը նա մեջբերում է անհրաժեշտ հղումներով: Բայց պատմահոր մի տեղեկությունը հաստատում է, որ Մաշտոցը գնացել է հենց այդ գրերի հետևից: Մենք վերևում նշեցինք, որ համաձայն նրա վկայության Մաշտոցն անցնում է Պղատոն անունով մի հեթանոս դիվանապետի մոտ, որը չի կարողանում նրան օգնել, այսինքն, չի գտնում գրերը: Վերջինիս հեթանոս լինելու փաստը կարծես հավաստիություն է տալիս Հ. Ներսիսյանի գրածին, քանի որ Յուլիանոսն էլ էր հեթանոս, բայց պատմահոր հետագա շարադրանքն էլ իր հերթին ակամա հաստատում է, որ Մաշտոցը գրերն էր փնտրում: Ահա, թե ինչ է նա գրում. «Բայց նա (Պղատոնը – Ա. Ն.) ասաց, թե ինքն առաջ ունեցել է մի ուսուցիչ, շատ հմուտ մարդ, որ հետո ճարտարների գրվածքներն էր Եդեսիայի դիվանից առնելով գնացել ու քրիստոնեություն է ընդունել, անունը Եպիփանոս. «Նրան ասաց, փնտրիր, գտիր, որ քո փափագը կատարվի»:<sup>1</sup> Այնուհետև ինչ որ գրում է Խորենացին, համընկնում է Կորյունի գրածի հետ՝ Նա անցնում է Սամոսատ, որովհետև Եպիփանոսը մեռած էր, «Թողնելով մի աշակերտ Հռոփանոս անունով, որ հունարեն գրության հրաշալի արվեստ ուներ և առանձնացել էր Սամոսում»:<sup>2</sup>

Կարծում ենք, որ ասվածից հետևյալ եզրակացություններին կարելի է հանգել.

1. Պղատոնը Մաշտոցին ասում է, թե քո փափագածին, իսկ նա փափագում էր գտնել հայոց գրերը, կհասնես Սամոսատում և նա այնտեղ գնալով դրանք իրոք գտնում է և ապա նոր անցնում է Եդեսիա, ուր հղկել է տալիս Հռոփանոսին:

2. Խորենացին, ինչպես և Կորյունն, այս պահը հանգամանալից չեն մատուցում, թերևս չուզենալով ստվերել իրենց մեծ ուցուցչի փառքը, չեն մանրամասնում, թե նա ինչ է գտնում Սամոսատում: Ըստ նրանց, փաստորեն ոչինչ, որից հետո աղոթքով նա ստեղծում է գրերը:

<sup>1</sup> **Մովսես Խորենացի**, Հայոց պատմություն, էջ 293:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 293:

Մենք մնում ենք այն կարծիքին, որ անհնար էր, որ հայոց գրեր գոյություն ունեցած չլինեին, որ ոչնչից անհնար է դրանք ստեղծել, այլ՝ ինչ որ հիմքի վրա և մեր հազարամյա պատմության ընթացքում, ունենալով դպրության և գրի աստվածուհի, հազիվ թե նրան պաշտած լինեինք, օտար գրերով կամ տառերով գրելով: Այս տեսակետին թերևս ավելի շատ մոտենում է Լեոն: Նա մասնավորապես հետևյալն է գրում. «Կարելի է, ուրեմն ավելի մեծ հավանականությամբ ենթադրել, որ հայկական նշանագրեր գոյություն ունեին հին ժամանակներից և նրանց ցուցակը գտնվում էր Դանիել Սիրիացու մոտ պատահաբար: Մենք դեռ Արտաշեսյան հարստության ժամանակներից տեսանք որ հայ պետությունը չէր կարող առանց դպրոցական դաստիարակության զարգանալ, քանի որ մի երկիր էր դա, ուր բազմալեզու ցեղեր կային, որոնք հայացվեցին, պետական մի ամբողջության մեջ ձուլվեցին հատկապես հայոց լեզվի միջոցով; Որ հայ ժողովուրդը պիտի ուենար իր գրականությունը, այդ թելադրում է ասել և նրա լայն տարածված ու ներքնապես զարգացած հեթանոսական պաշտամունքը: Եվ վերջապես նույնիսկ Կորյունն ու Ղազար Փարպեցին էլ շատ մութ ակնարկներով հիշատակում են «վաղնջուցե գոյություն ունեցած հայկական նշանագրերը: Թույլատրելի է անգամ մտածել, որ Մաշթոցը ինքը հնչյուններ հաղորդեց դանիելից ստացած գրերին, քանի որ առանց սիրիացի եպիկոպոսին տեսնելու, առանց նրան աշակերտելու - մի բան, որ պիտի տեղի ունենար, էթե Դանիելը լիներ տառերի հնարողը - գործածության մեջ մտցրեց այդ խորհրդավոր այբուբենը»<sup>1</sup>:

Լեոն փաստորեն այստեղ այն կարծիքն է հայտնում, որ այնուամենայնիվ Դանիելյան գրերն են հիմք հանդիսացել, որոնք նա համապատասխանել է հնչյուններին, որը հաստատում է մեր այն տեսակետի ճշտությունը, որ ինչ որ հիմքի վրա պետք է դրսևորվեր նրա հանճարը: Նույնը վերաբերում է մեր այն մյուս տեսակետին, որ նա գտել է հայոց գրերը Սամոսում և դրանց է կենդանի շունչ հաղորդել, միգուցե ինչ որ տառեր էլ հնարելով ամբողջացրել է՝ դրանցով փակելով նշանագիր չունեցած հնչյունների բացը:

---

<sup>1</sup> Լեոն, Երկեր, հ.3., էջ 507-508:

Հենվելով Մարկվարտի տեսակետների վրա, Լեոն, որը մինչ այդ չի անտեսում նաև աղոթքների և միստիկ տեսիլների դերը, այն կարծիքն է հայտնում, որ «դանիելյան տառերը, հետևելով ընհանուր սեմական սիստեմին, աջից դեպի ձախ էին գրվում և չունեին ձայնավորներ: Մաշթոցը փոխեց տառերի ձևը, դարձնելով ձախից դեպի աջ գրվող, դասվորեց տառերը հունական այբուբենի կարգով, հնարեց ձայնավոր տառերը, կազմեց երկբարբառներ և առհասարակ վայելուչ ձև տվեց իր ստեղծագործության, որ այսուհետև ստացավ Մաշթոցյան կամ Մեսրոպյան տառեր անունը: Այս տառերի ձևերը ցույց են տալիս որ նրանք փոխ են առնված զանազան ազգերի այբուբեններից. գլխավորապես սիրիական, ապա հունական, պարսիկ- սասանյան: Կան և այնպիսները, որոնց ծագումը ճշտել չէ կարելի: Աշխարհի բոլոր այբուբեններն իրարից վերցրած ձևափոխություններ են: Այս կողմից էլ, ուրեմն, Մաշթոցյան այբուբենը բացառություն կազմող չէր»:<sup>1</sup> Ինչպես նշեցինք արդեն, լիովին համաձայն լինելով, որ Մաշտոցը եղած մի հիմքի վրա է կենդանացրել մեռած գրերը, դրանց համար գտնելով անհրաժեշտ հնչյունները, բնավ չենք կարող համաձայնվել Մարկվարտի տեսակետը կիսող Լեոյի հետ, որ հայոց գրերը փոխ են առնված իր հիշատակած ժողովուրդների այբուբեններից: Այդ դեպքում պետք է մեջբերել նրանից տառեր, որոնք կհիշեցնեն այդ ժողովուրդների այբուբեններից ինչ որ տառերի: Մենք շատ ավելի հին մշակույթ ունենք, քան նրա հիշատակած շատ ժողովուրդներ և որևէ մեկը չի կարող վերջնականապես պնդել նման հայեցակետի ճշտությունը: Մենք մնում ենք այն կարծիքին, որ կամ դանիելյան գրերը հայոց հին գրերն են եղել, թերի կողմերով, կամ էլ նա իրոք գտել է Սամոսատ փախցրած հայոց այբուբենն այն քրմի կողմից. որին հիշատակեցինք:

Հայոց այբուբենի ստեղծման վերաբերյալ այլ բան չի ասվում պատմիչներին կրկնելուց բացի Ստ.Մելիք – Բախշյանի խմբագրած հայ ժողովրդի պատմության դասագրքում: Ըստ դրա, Մաշտոցն այբուբենն ստեղծել է Եդեսիայում, որն ամենևին չի հիմնավորում,<sup>2</sup> քանի որ, ինչպես վերևում շեշտեցինք, համաձայն պատմահոր, նա Եդեսիայից Պղատոն ա-

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 508:

<sup>2</sup> Տես Հայ ժողովրդի պատմություն, խմբ. Ստ. Մելիք – Բախշյանի, էջ 324-325:

նունով ճարտասանի խորհրդով անցնում է Մամոսատ: Եվ այստեղ է նա ստեղծում այբուբենը (Անախ այն հանգամանքից, հնի հիման վրա, թե բոլորովին նոր, այբուբենը նա է ստեղծել), որը Եդեսիա անցնելով հղկել է տալիս Հռոփանոսին: Որ Մամոսատում է ստեղծում, վկայում է նաև Կորյունը, գրելով հետևյալը՝ «Եվ ապա հրաժեշտ տալով սուրբ եպիսկոպոսին, իր օգնականների հետ միասին իջավ Մամոսատ քաղաքը, ուր մեծապատիվ կերպով մեծարվեց եպիսկոպոսից և եկեղեցուց: Եվ հենց այնտեղ, նույն քաղաքում գտավ հելլենական դպրության մի գրագիր, Հռոփանոս անունով, որի ձեռով նշանագրերի բոլոր գանազանությունները՝ բարակն ու հաստ, կարճն ու երկայնը, ամբողջապես հորինելուց և վերջացնելուց հետո ձեռնարկեց թարգմանություն անելու երկու մարդու, իր աշակերտների հետ, որոնց առաջինի անունը Հովհան էր, Եկեղյաց գավառից և երկրորդինը՝ Հովսեփ, Պաղանական տնից»:<sup>1</sup> Այսպիսով, Հռոփանոսը հղկել և համաչափ է դարձրել գրերը, որոնք բարակ ու հաստ, կարճ ու երկար են եղել: Հարց է առաջանում՝ եթե Մաշտոցն էր դրանք հորինել, ապա ինչու՞ էր նման կերպ դա արել և ոչ միակերպ: Կասկածից զերծ է, որ նա ձեռքի տակ ունեցել է տարբեր չափի նշանագրեր, որոնք մի չափի և տեսքի է բերել տվել: Հայոց այբուբենի ստեղծման մասին բավական հետաքրքիր դատողություններ է կատարում Մաղաթիա արք. Օրմանյանը: Նա հետևյալն է գրում. «Մենք պատմագրի յատուկ շրջանին մեջ փակուելով, եւ բանասեր հովեր առնել չուզելով, չենք ուզեր մերժել առաջին Դանիէլեան նըշանագիրին անբաւականութիւնը, եւ ոչ ալ հերքել Մեսրոպի շրջագայութեանց եւ վերջնական յաջողութեան պատմութիւնը: **Աստուածային տեսիլքին պատմութիւնը մնաւ դժուարութեան տեղի չի կրնար տալ, քանի որ գիտենք թէ մեր երանաշնորհ Հայրերը առանց Աստուծոյ եւ առանց աղօթքի գործի մը ձեռնամուխ չէին ըլլար, եւ ամէն յաջողութիւն եւ անականկալ բարեղիպութիւն ուղղակի աստուածային աջոյն անմիջական ներգործութեան կը վերագրէին:** Մեսրոպ ալ որ շարունակ աղօթքէ չէր դադարած, ուրիշ կերպով չէր կրնար մեկնել իր վերջնական յաջողութիւնը: Այլ թէ ինչ էր Մեսրոպի լուսն յաջողութիւնը, նորէն մութ կը մնայ պատմական յիշատակներու մէջ: Դանիէլեան նշանագիրերը, ասորական կամ սեմական աղբիւ-

<sup>1</sup> Կորյուն, Վարք Մաշտոցի, էջ 30:

րէ բխած, առանց ձայնաւորի այբուբեն մը եղած պէտք է ըլլային, մինչ Սահակ ու Մեսրոպ յունական դպրութեանց հմուտ անձեր, հարկաւ արեւմտեան յունալատին այբուբենի դրութեամբ ձայնաւորներով լրացեալ տառեր կը հետամտէին կազմել: Եւ եթէ Խորենացիին պատմութեան համեմատ, երկնային աջը եօթը ձայնաւոր տառեր միայն գրած է, եղածը պարզապէս անձայնաւոր այբուբենը ձայնաւորներով լրացնելու արդիւնքն է: Դիտուելու արժանի կէտեր են, որ տեսիլքը պատմողներուն կարծիքով, Մեսրոպ տեսիլքէն ետքն ալ Հռոփանոսի հետ աշխատեցաւ, կերպածեւեալ զգիրն, եւ փոխադրելով զհայերէն աթուրայսն ըստ անասայթաքութեան սիւղոբայից Հելլենացոց (ԽՈՐ. 247), եւ զամենայն ընտրութիւնս նշանագրոյն, զնրաագոյնս, զկարճն եւ զերկայնն, զառանձինն եւ զկրկնաւորն, միանգամայն յօրինեալ եւ յանկուցեալ (ԿՈՐ. 19): Ըստ այսմ զիրերուն լրանալէն ետքն ալ Հռոփանոսի օգնութեամբ նախ տառերուն ձեւեր կը կոկեն, յետոյ տառերը յունարէնի կարգին կը վերածեն, եւ վերջապէս առոգանութեան շեշտերը կը ճշդեն (35)»<sup>1</sup> (Ընդգծումները մերն են – Ա. Ն.):

Մեջբերումներից եզրկացությունները հետևյալներն են՝ ա. աստվածային տեսիլքների շնորհիվ տառերի հորինման պատմությունն օրինաչափ էր հայ ժողովրդի համար, որը առանց Աստծու և աղոթքի ոչինչ չէր ձեռնարկում, բայց փաստորեն Օրմանյանը դա համարում է միջ կամ առասպել, բ. իրոք թե ինչ է կոնկրետ արել Մաշտոցը, հորինել է գրերը, հրեշտակի աջի պատին ցույց տվածն է արտագրել, մնում է համակողմանիորեն անբացատրելի, գ. ըստ նրա այբուբենը փաստորեն եղել է, բայց առանց ձայնավորների, որոնցով այն լրացվել է, դ. Իրոք եթե այբուբենը գրոյից է ստեղծվել, ապա նույն չափերի և նույն հաստության կլինեին տառերը և Հռոփանոսի հղկելու կարիքը չկար: Օրմանյանն այնուհետև դարձյալ մի հետաքրքիր վարկած է առաջ քաշում, համաձայն որի այբուբենի ստեղծման գործում գերապատվությունը տալիս է Սահակ Պարթևին, ավելի ճիշտ այն տպավորությունն ենք ստանում, որ երկուսով են գործը զլուխ բերել: Ահա թե ինչ է նա գրում. «Պէտք է ուրեմն ըսել, թէ ինչ որ Մեսրոպ իր շրջագայութեանց մէջ կրցաւ ստանալ, յաջողութիւնը գոր ձեռք ձգեց, խորհուրդները գորս Հռոփանոսէ ստացաւ, ամէնքն ալ ժողվեց բերաւ

<sup>1</sup> Մ. Օրմանեան, նշվ. աշխ., հ. Ա, էջ 139:

և Սահակի գերագոյն դատաստանին ենթարկեց, և Սահակի ցուցուցած ուղղութիւններով, և տուած կատարելագործութիւններովն է, որ հայերէն այբուբենը իր վերջնական թիւն ու կարգը, ձեւն ու հեգեման ստացաւ, և գերագոյն հեղինակութեամբ հաստատուեցաւ: Դանիւղեան նշանագիրները, որոնք ասորական ծագում և անձայնաւոր դրութիւն ունէին, հիմնովին փոխուեցան և փոխադրուեցան, նոր կարգաւորութիւն ստացան յունական ալփաբետին հետեւողութեամբ, յայտ միջանկեալ յաւելուածներով, որպէսզի թաւական ըլլան հայերէն լեզուին թուր հնչիւններուն համապատասխանել, քանի որ հայերէնի հնչիւնները շատ աւելի ձայներ ունէին, որոնք յունարէնի մէջ չէին գտնուեր, մանաւանդ թաղաձայններու շարքին (36): Այս կերպով հայերէն այբուբենը 36 տառերու նշանաւոր թիւին հասած եղաւ հին ծանօթ լեզուներու բոլորէն ալ աւելի տառերով, յայտ և ամէն հնչիւնները դիրաւ արտաբերելու առաւելութեամբ»<sup>1</sup> (Ընդգծումը մերն է – Ա. Ն.):

Շ. Մանանդյանը, մանրամասներուն քննական վերլուծության ենթարկելով այբուբենի ստեղծման պատմությունը, այն եզրակացությանն է փաստորեն հանգում, որ փաստորեն եղել են նախամաշտոցյան գրեր, դանիւղեան գրեր, բայց Մաշտոցը բոլորովին նորն է ստեղծել: Խնդրում շատ խորանալով, մենք կշեղվենք մեր գլխավոր նպատակից: Մոսկ շեշտենք, որ դժվար է համաձայնվել նրա այն կարծիքի հետ, որը մատուցում է որոշ հեղինակների զարգացրած տեսակետների հակադրվելով, (Ա. Գարագաշյան,<sup>2</sup> Ա.Աբրահամյան, Մ. Տեր-Մովսէսյան), թէ «հայ գրականության գոյությունը մինչև հինգերորդ դարը, այսինքն՝ մինչև Մեսրոպյան գրերի գյուտը, ավելի քիչ հավանական է»:<sup>3</sup>

«Շօգուտ այս ենթադրության ամենահամոզիչ ապացույցը նրանք համարում են այն, - գրում է նա, - որ հինգերորդ դարի հայ գրական լեզուն և թարգմանական գրականությունն ունեն այնպիսի կատարելութ-

<sup>1</sup> Նույն տեղում:

<sup>2</sup> Գարագաշյան Ա., Քննական պատմություն հայոց, հ. Գ., էջ 39, 69-71, Մ. Թեր-Մովսէսյան, История перевода Библии на армянский язык, ЦПБ, 1902, ст., 17-27, Աբրահամյան Ա., Նախամեսրոպյան հայկական գրականության հարցը, Պետական Մատենադարանի գիտական նյութերի ժողովածու, թիվ 1, Երևան, 1941, էջ 41-52:

<sup>3</sup> Հակոբ Մանանդյան, նշվ. աշխ., էջ 263:

յուն ու գեղեցկություն, որոնք չէին կարող ստեղծված լինել մի քանի տասնամյակների ընթացքում»<sup>1</sup>:

Կարծում ենք, որ վերոնշյալ հեղինակները ճիշտ են: Դրա վկայությունն են թեկուզ Քրիստոնեության, որպես պետական կրոն ընդունման ընթացքում, մեր հզոր հայկական մշակույթի ոչնչացումը, որի մասին մանրամասն գրում է Ագաթանգեղոսը: Իսկ Մանանդյանի փաստարկներն անհամոզիչ են<sup>2</sup> և դրանց հարկ չենք համարում անդրադառնալ: Միայն հավելենք, որ նրա այն կարծիքը, որ մինչև մեսրոպյան գրերը մենք ունեցել ենք հարուստ բանահյուսություն և նույնն է եղել նախամաշտոցյան և մաշտոցյան շրջանի լեզուն, իր տեսակետի հակառակն է ապացուցում: Եթե լեզուն եղել է նույնը, ուրեմն մշակույթն էլ նույնն է եղել, պարզապես գրերի չունենալով կամ կորստով, չի գրվել այն ամենն, ինչ եղել է բանավոր խոսքում:

### **ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

Այսպիսով, եզրակացությունը մեկն է՝ հայոց այբուբենն ստեղծվել է ոչ գրոյից, դանիելյան նշանագրերի վրա աշխատելով, դրանց նոր ձև տալով, նոր տառեր ավելացնելով, քանի որ հայոց հնչուններն ավելի շատ էին և դրանք արտահայտող տառերը բացակայում էին: Ահա սրանք է ստեղծել Մաշտոցը Սահակի օգնությամբ և օժանդակությամբ և արքայի բարձր հովանավորությամբ: Սակայն, մեզ համար կարևորը ոչ այնքան այն է, թե ինչպես է ստեղծվել այբուբենը, այլ այն, որ նրա ստեղծմամբ է, որ նորից կենդանացավ հայոց լեզուն, նորից դպրոցներում սկսեցին սովորեցնել հայերեն, որն իր հերթին նպաստեց քրիստոնեական հավատի էլ ավելի արմատականացմանը, քանի որ հայերեն թարգմանվեց Աստվածաշունչը: Հայոց այբուբենի վերածնունդն, ըստ մեզ նպաստել է Հայոց մշակույթի ընդհատված փուլից հետո դրա վերստին և նոր թափով զարգացմանը:

**Ашот Нерсисян, Аршак Нерсисян, Анализ деятельности Месропа Маштоца по созданию армянской письменности - О создании армянского алфавита создано много работ. Естественно, преобладало мнение, что его**

---

<sup>1</sup> Նույն տեղում:

<sup>2</sup> Նույն տեղում:

создал Месроп Маштоц. На этот счет не может быть второго мнения. Он действительно создал алфавит, но на основе существующих армянских букв. Современный алфавит создавался не на пустом месте, работая над символами Даниила, придавая им новую форму, потому что звуков было больше и буквы, выражающие их отсутствовали. Вот что создавал Маштоц с помощью Саака и высокой волей короля. Однако для нас важно не столько то, как был создан алфавит, а то, что именно благодаря его созданию армянский язык ожил, в школах снова начали изучать армянский, что, в свою очередь, способствовало развитию христианства, потому что Библия была переведена на армянский. По нашему мнению, ренессанс армянского алфавита способствовал его возрождению после прерванной фазы развития армянской культуры и вносил свой вклад в его очередного развития с новой силой.

**Ashot Nersisyan, Arshak Nersisyan, Analysis of Mesrop Mashtots activity of Armenian letters creation** - Many works have been written about the creation of the Armenian alphabet. Naturally, the prevailing opinion was that it was created by Mesrop Mashtots. There can be no second opinion on this. He actually created an alphabet, but based on existing Armenian letters. The modern alphabet was not created from scratch, working on the symbols of Daniel, giving them a new form, because there were more sounds and the letters expressing them were absent. This is what Mashtots created with the help of Sahak and the high will of the king. However, what is important for us is not so much how the alphabet was created, but that it was thanks to its creation that the Armenian language came to life, they began to study Armenian in schools again, which, in turn, contributed to the development of Christianity, because the Bible was translated into Armenian. In our opinion, the renaissance of the Armenian alphabet contributed to its revival after the interrupted phase of the development of Armenian culture and contributed to its subsequent development with renewed vigor.

Ուղարկվել է խմբագրություն 31.02.2024թ.

Գրախոսվել է 05.03.2024թ.

Ստորագրվել է տպագրության 10.03.2024թ.